ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԵՎ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ /2023-24 ՈՒՍՏԱՐՈՒՄ/

/23.05.2024թ. տն. նիստ/

ԵՊՀ ԻՄ Մասնագիտական կրթության որակի ապահովման (ՄԿՈԱ) բաժինը 2022-23 ուստարում տարբեր մեխանիզմներով վեր էին հանվել դասախոսների և ուսանողների մի շարք խնդիրներ և կարիքներ:

Բաժնում այդ խնդիրները տրոհվել են ըստ ուղղությունների (ստացվել է խնդիրների **34 խումբ**), ապա առանձնացվել են ըստ պատասխանատվության և ընթացիկ ուստարում ուղարկվել են բոլոր ստորաբաժանումներին, որով ստորաբաժանումները կազմել են ներառված խնդիրների լուծման իրենց ծրագրերը՝ նշելով խնդիրների լուծման իրենց քայլերը, ակնկալիքները և ժամկետները:

Այդ խնդիրների պատճառների հստակեցման, դրանց հնարավոր լուծման համար պատասխանատու ստորաբաժանումները կազմակերպել են հանդիպում-քննարկումներ ուսանողների և դասախոսների հետ:

Ներկայացնեմ վեր հանված մի քանի հիմնական խնդիրները և դրանց լուծման համար իրականացված գործընթացները:

1. Հետազոտական աշխատանքների հետ կապված խնդիրները և իրականցված գործընթացները

Այստեղ մինչև խնդիրներին մանրամասն անդրադառնալը պետք է նշել, որ առաջին կիսամյակի հետազոտական աշխատանքների համար ուսանողների բարձրաձայնած խնդիրները հիմնականում կապված են թեմատիկայի, գրականության և գնահատման հետ, իսկ 2-րդ կիսամյակի խնդիրները կապված են ինքնուրույն աշխատելու, հետազոտական աշխատանքի կատարման, արդյունքների ձևակերպման և իրականացման ընթացքի հետ: Այստեղ հստակ զգացվում է, որ 2-րդ կիսամյակում ուսանողների մի մասն առաջին անգամ է կատարում հետազոտական աշխատանք և նրանք ավելի շատ են աջակցության կարիք ունենում, իսկ առաջին կիսամյակում հետազոտական աշխատանք կատարելու գործընթացն ուսանողներին ծանոթ է և նրանց խնդիրներն ավելի բովանդակային են և առաջարկներն ավելի նպատակային:

Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժինը (ԿԲԴՎԲ) հետազոտական աշխատանքների իրականացման և գնահատման հետ կապված բոլոր խնդիրների շուրջ ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել է քննարկումներ ամբիոնների վարիչների, կրթական ծրագրերի ղեկավարների, հետազոտական աշխատանք ղեկավարող դասախոսների և ուսանողների հետ: Բաժինը ուղղորդել է բոլորին հ/ա պլանավորման և կատարման ընթացքում առաջնորդվել «ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական աշխատանքների պատրաստման և գնահատման կարգ»-ով /ԳԽ 01.10.2022թ/, պահել ու առաջնորդվել կարգում առկա ժամանակացույցով:

Նաև ավելացնենք, որ ԿԲԴՎ բաժինը ընթացիկ ուստարում «Հետազոտական աշխատանքների պատրաստման հմտություններ» թեմայով կազմակերպել է 3 համալսարանական դասընթաց, որին մասնակցել կարող էին բոլոր ցանկացողները:

Հետազոտական աշխատանքների հետ կապված առանձնացրել ենք 4 հիմնական խնդիրներ կապված գրականության, հ/ա գնահատման, թեմաների և կատարման ընթացքի հետ:

- **Գրականության և նյութերի հավաքագրման հետ կապված խնդիրներ**

Այստեղ ուսանողները նշել են գրականության և նյութերի բացակայության կամ սղության մասին, հայերեն լեզվով նյութերի բացակայության, ծավալուն նյութերի հավաքագրման դժվարությունների մասին:

Այս խնդիրների լուծման հետ կապված **գրադարանի վարիչը** նշել է, որ ըստ ամբիոնների պահանջագրերի գրադարանը մշտապես համալրում է իր ֆոնդը մասնագիտական գրականությամբ, 2023-24 ուստարում ձեռք է բերվել 15 մասնագիտական գիրք, որից 10-ը պատմություն մասնագիտության համար (պատմ.-թվայնացվել է 20 գիրք): Նոր գրքերի ձեռքբերման համար պարբերաբար իրականացվել է մոնիթորինգ, գրադարանի կայքէջում տեղադրվել է գիտաչափական շտեմարանների մասին տեղեկություն:

Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնը նշել է, որ ուսանողների հետ հանդիպել և մեկնաբանել են, որ գրականության բացակայությունը պայմանավորված է հետազոտական աշխատանքների բնույթով, որովհետև ուսանողներին հանձնարարվում են քիչ ուսումնասիրված նյութեր:

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնը նշել է, որ անհրաժեշտ բոլոր նյութերը և հայերեն, և օտար լեզուներով (մասնավորապես ռուսերեն), տեղադրվում են առցանց մուդլ հարթակում, ուղղակի պետք է զարգացնել, բարելավել ուսանողների օտար լեզվի իմացության մակարդակը (այս ուղղությամբ, ենթադրում ենք, պետք է աշխատեն օտար լեզու դասավանդող դասախոսները և առանձնահատուկ՝ ամբիոնը):

- **Հետազոտական աշխատանքի գնահատման հետ կապված խնդիրներ**

Ուսանողները այստեղ հիմնականում նշել են գնահատման միավորի հետ կապված խնդիրը, օրինակ հստակեցնել տրվող միավորը (5 միավորը քիչ է) (Զբոսաշրջություն, ՏՄՄ), կամ դարձնել ստուգարք (Ֆինանսներ), և գնահատման չափանիշները հաճախակի չփոխել (Հոգեբանություն):

Կրթական բարեփոխումների և դասախոսների վերապատրաստման բաժինը այս խնդրի շուրջ կազմակերպել է քննարկումներ և նշել, որ հ/ա գնահատման չափանիշներում միավորը այլևս մեծացնել հնարավոր չէ, այն նույնիսկ իջել է և մաքսիմալ միավորը կարող է լինել 4-ը: Իսկ գնահատման չափանիշները ներկայացված են համապատասխան կարգում և երբեք չեն փոխվել:

- **հետազոտական աշխատանքների թեմաների հետ կապված խնդիրներ**

Ուսանողներն առաջարկում են թեմաները նախապես քննարկել իրենց հետ («ֆինանսներ»), թեմաների համար անհրաժեշտ նյութերը լինեն հասանելի («ֆինանսներ», ՏՄՄ), թեմաները լինեն արդիական, իրենց հետաքրքրության շրջանակներից (ԱԼԳ, ՀԼԳ, Հոգեբանություն,Դիզայն, ԻԿՄ), քիչ ուսումնասիրված (ՀԼԳ):

Այս խնդիրներին անդրադարձած ամբիոնները նշել են, որ թեմաները քննարկվում և ընտրվում են ուսանողների հետ փոխհամաձայնեցված (ՀԼԳ), որոշ դասընթացների հետազոտական աշխատանքների համար առկա է անհրաժեշտ տվյալների հասանելիության խնդիր՝ կապված հաշվետվությունների ու կազմակերպությունների տվյալների հրապարակայնության բացակայությամբ (Ընտն), հետազոտության համար առաջարկվում են ուսումնական ծրագրում չընդգրկված թեմաներ կամ դասընթացում ուսումնասիրվող թեմաներ, որոնք պահանջում են հավելյալ հետազոտում և ծրագրային իրականացում (ԻԿՄ):

ԿԲԴՎ բաժինը նշել է, որ ըստ կարգի և ժամանակացույցի թեմաների ընտրության կազմակերպման ժամանակ ուսանողներին տրվել է բավականին երկար ժամանակ: Բաժինը

ընթացիկ ուստարում «Հետազոտական աշխատանքների պատրաստման հմտություններ» թեմայով կազմակերպել է 3 համալսարանական դասընթաց, որին մասնակցել կարող էին բոլոր ցանկացողները: Իսկ կիսամյակի ընթացքում մեկ հետազոտական աշխատանք իրականացնելու պահանջը իրատեսական չէ, որովհետև ըստ կարգի 5 կիսամյակում պետք է իրականացնել առավելագույնը 7 հ/ա:

- **Հետազոտական աշխատանքի կազմակերպման, կատարման ընթացքի հետ կապված խնդիրներ**

Ուսանողներն առաջարկում են օգնել օգտվելու ճիշտ աղբյուրներից (ԱԼԳ), աջակցել աշխատանքի իրականացման ընթացքում (հոգեբանություն), կցել մի քանի դասախոս, նշանակել մենթորներ (Ֆինանսներ), աշխատանքները լինեն անհատական (Պատմություն), ստեղծել պայմաններ Համալսարան-դպրոց համագործակցության համար (ՏՄՄ), ապահովել անհրաժեշտ սարքավորումներով և նյութերով (ԻԿՄ):

Ուսանողները նշել են, որ խնդիր ունեն տեղեկատվության հավաքագրման հետ կապված, որովհետև մարդիկ հրաժարվում են մասնակցել հետազոտությանը (Հոգեբանություն), օտարալեզու գրականությունից օգտվելու հետ, այսինքն կա հայալեզու գրականության պակաս (Հոգեբանություն, պատմություն):

Ընդհանուր տնտեսագիտության (Ընտտ) ամբիոնից նշել են, որ մենթորներ նշանակել, կցել մի քանի դասախոս չեն կարող, որովհետև կարգով նման գործողություններ չի թույլատրվում:

Հայոց պատմության և հասարակագիտության (ՀՊՀ) ամբիոնը նշել է, որ «Պատմություն» կրթական ծրագրում այս՝ 2023-24 ուսումնական տարվա ընթացքում չեն եղել թիմային աշխատանքներ, հետազոտական աշխատանքների քանակը ավելացվել է, հիմա բոլոր մասնագիտական դասընթացներն ունեն կամ ինքնուրույն աշխատանքի բաղադրիչ կամ ընթացիկ ստուգումներ, որոնք իրենցից ներկայացնում են փոքր հետազոտական աշխատանքներ: Օտար լեզուների դասընթացների ժամաքանակները հիմնավորված պակասացվել են և եղած ժամաքանակները պետք է ճիշտ օգտագործել և հմտանալ մասնագիտական բնագավառում: Պատմություն կրթական ծրագրի շրջանավարտը պետք է ունենա մինիմալ գիտելիքներ օտար լեզուներից, որպեսզի կարողանա հաղորդակցվի մասնագիտական հանրույթում:

Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների (ԾԻՏ) ամբիոնը նշել է, որ դասախոսներն աջակցել են ուսանողներին գրականության փնտրման գործընթացում, տրամադրել են գրքեր և հոդվածներ, օգնել են ճիշտ մշակել և ձևակերպել աշխատանքի կառուցվածքային տարրերը: «Հետազոտման պլանավորում» առարկայում նախատեսվել են գործնական դասերի ժամեր, որոնց ընթացքում ստացած գիտելիքները կկիրառվեն հետազոտության կազմակերպման, իրականացման, արդյունքների ձևակերպման և ներկայացման գործընթացներում:

2. Շրջանավարտների նշած խնդիրները և իրականացված գործընթացները

(Հիմք՝ ԵՊՀ ԻՄ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության հարցման արդյունքներ)

Այստեղ առանձնացվել է 3 խնդիր, կապված գործնական կարողությունների, օտար լեզվի իմացության մակարդակի և ռեսուրսների հետ:

- Շրջանավարտները նշել են, որ մասամբ են բավարարված ձեռք բերած **գործնական հմտություններից** (միջ. միվ.-4.2, ԻԿՄ 4.14 (17-ից 11-ը), **ԱԼԳ՝ 3.82,** ՖԼԳ՝ 4.1, ՌԼԳ՝ 4.0, Պատմ.՝ 4.1 (7-ից 4-ը), **Ֆին՝ 3.85** (17-ից 11-ը)):

Ծրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնը նշել է, որ ուսումնական պլանում վերանայումների ժամանակ հնարավորինս ավելացվում է գործնական դասերի մասնաբաժինը, ինչպես նաև այդ դասաժամերի քանակը, ինքնուրույն, հետազոտական և ավարտական աշխատանքների շրջանակում պարտադիր պահանջվում են պրակտիկ մշակումներ և ծրագրային իրականացումներ, ինչպես նաև մասնագիտական պրակտիկաներն անց են կացվում SS ոլորտի ընկերություններում:

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնը նշել է, որ «Ֆինանսներ» կրթական ծրագրի վերանայման արդյունքում կրճատվել են խիստ տեսական առարկաների ժամաքանակները և ներմուծվել են մասնագիտական ու գործնական նշանակություն ունեցող առարկաներ:

Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնը նշել է, որ «Պատմություն» կրթական ծրագիրն այս տարի ևս վերանայվում է և նոր կրթական ծրագրում ավելի մեծ ուշադրություն է դարձվելու ուսանողների պրակտիկ գործունեությանը:

- շրջանավարտները նշել են, որ բավարարված չեն **օտար լեզվի իմացության** ապահովումից (միջ. միավ՝ 3.58, Պատմ.՝ 2.64):

Այստեղ, Օտար լեզու դասավանդող դասախոսները պնդում են, որ ուսանողները դպրոցից գալիս են բազային ցածր գիտելիքներով, ինչը դժվարացնում է իրենց աշխատանքը:

- **Խնդիրներ կապված ռեսուրսների հետ (միջ. միավ.՝ 4.01).**

Ռեսուրսների հետ կապված նշվել են շենքային պայմանները (ԲԳՖ, ԿԱՖ), լսարանների անբավարար քանակը (ՀԳՖ, ՏԳՖ):

Տնտեսական գործունեության կազմակերպման և սպասարկման (ՏԳԿՍ) բաժինը նշել է, որ ԲԳՖ և ԿԱՖ շենքային պայմանների բարելավումը կախված է տանիքի վերանորոգումից, որից հետո միայն հնարավոր է իրականացնել վերանորոգման աշխատանքներ: Կա ֆակուլտետների, անվտանգության աշխատակցի և պարետների համագործակցության անհրաժեշտություն:

3.Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների նշած խնդիրները և իրականացված գործընթացները

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների առաջարկները հիմնականում կապված են ավարտական աշխատանքների թեմաների արդիականության, թեմաների կիրառական նշանակության և ուսանողների սեփական հետազոտությունների արդյունքների առկայության և ներկայացման հետ: Մասնավորապես.

- **«Ֆինանսներ»** կրթական ծրագրի համար. ավարտական աշխատանքների թեմատիկան ունենա կիրառական նշանակություն որևէ խնդրի կամ զարգացման ուղղությունների վերաբերյալ:

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնը նշել է, որ հնարավորինս փորձ է արվել ավարտական աշխատանքների թեմատիկային տալ գործնական նշանակություն, սակայն դրա լիարժեք իրականացումը կախված է ուսումնասիրության համար անհրաժեշտ տվյալների հասանելիության հետ:

- **«Զբոսաշրջություն»** կրթական ծրագրի համար. ավարտական աշխատանքների մեջ թույլ են ներկայացված գործնական թիրախային առաջարկները, պետք է ներառել նաև մասնավոր հատվածի ուսումնասիրություններն ու առաջարկները:

Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնը նշում է, որ նշված խնդիրը փորձում են լուծել մասնավոր կազմակերպություններում մասնագիտական պրակտիկայի իրականացման միջոցով:

- **«Պատմություն»** կրթական ծրագրի համար. ուշադրություն դարձնել Հայոց պատմության հին և միջնադարյան ժամանակաշրջանների թեմաներին:

Հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնը նշում է, որ ընթացիկ ուսումնական տարում ամբիոնի առկա ուսուցման 14 ավարտական աշխատանքներից 3-ը **(21.4%)** վերաբերում են նշված ժամանակաշրջանին, հեռակա ուսուցման՝ 20 ավարտական աշխատանքներից 5-ը **(25%)**:

- **«Ռուսաց լեզու և գրականություն»** կրթական ծրագրի համար. խորացնել ռուսերենի և ռուս գրականության վերաբերյալ հիմնարար տեսական գիտելիքները, աշխատանքներում ուշադրություն դարձնել թեմաների ներկայացման ձևաչափերին՝ ռուսերենը որպես օտար լեզու դասավանդելու տեսանկյունից, ավելի շատ աշխատել բանավոր խոսքը ձևակերպելու հմտությունների վրա, ցանկալի կլիներ իրականացնել տեխնիկական փոփոխություններ:

Օտար լեզվի ամբիոնը նշում է, որ ուսանողների մոտ թերի է բանավոր խոսքը և որոշվել է կրթական ծրագրի ընթացիկ ուստարվա վերանայման ժամանակ «Ժամանակակից ռուսաց լեզվի պրակտիկում-1,2,3,4» դասընթացների թեմաներում կատարել փոփոխություններ, որոնք կնպաստեն ուսանողների բանավոր խոսակցական կարողությունների զարգացմանը:

ԿԲԴՎ բաժինը նախատեսում է մինչև ամփոփիչ ատեստավորումը (մայիս ամսվա սկզբին) շրջանավարտների համար իրականացնել ուսանողների համար «Արդյունավետ տեսահասիկներ պատրաստելու» վերաբերյալ հատուկ դասընթացներ:

4. Արտաքին շահակիցների բարձրաձայնած խնդիրները պրակտիկանտ–ուսանողների վերաբերյալ և իրականացված գործընթացները

(հիմք՝ Արտաքին շահակիցների կարծիքը պրակտիկանտ-ուսանողների վերաբերյալ հարցում (22-23 ուստարի))

Այստեղ արտաքին շահակիցները բավականաչափ խնդիրներ են նշել ՏՄՄ և «Հոգեբանություն» կրթական ծրագրերի պրակտիկանտների մասնագիտական, մանկավարժական, հաղորդակցվելու, երեխաների հետ աշխատելու, աշխատանքին ստեղծագործաբար մոտենալու և այլնի հետ կապված:

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնը նշել է, որ խնդիրները հետևանք են այն փաստի, որ ունենք ցածր միավորներով բուհ ընդունված ուսանողներ: Դիմել են գրադարանի վարիչին գրականության ձեռքբերման հարցով. մայրենի լեզվի դասավանդման մեթոդիկա (12 գասագիրք), հատուկ մանկավարժություն (5 դասագիրք):

«Ֆինանսներ» կրթական ծրագրի պրակտիկանտների համար շահակիցները նշել են մի շարք խնդիրներ կապված նեղ մասնագիտական գիտելիքների և կարողությունների հետ, նրանք առաջարկում են ուսանողների մոտ զարգացնել վաճառքի հմտությունները, բարելավել բանկային օրենքների իմացության մակարդակը և բանկային գործին տիրապետելու

կարողությունները, զարգացնել տվյալների հետ աշխատելու և դրանց նախնական մշակում կատարելու կարողությունները և այլն։

Ընդհանուր տնտեսագիտության ամբիոնը նշել է, որ վերանայվում է «Ֆինանսներ» կրթական ծրագիրը և նախատեսվում է ավելացնել հաշվապահական հաշվառման դասաժամերը՝ պարտադիր դարձնելով հաշվապահական ծրագրերի ուսուցանումը։ Նշում են, որ բանկային ոլորտի կարգավորման օրենսդրական և ենթաօրենսդրական մոտեցումներն ուսումնասիրվում են «Բանկային գործ» պարտադիր և «Առևտրային բանկերի գործառույթները» կամընտրական դասընթացների շրջանակներում։

5. Դասավանդման որակի և արդյունավետության հետ կապված խնդիրները և իրականացված գործընթացները

(Հիմք՝ Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցում 22-23)

Դասավանդման որակի և արդյունավետության հետ կապված ուսանողները բարձրացրել են խնդիրներ կապված գործնական դասաժամերի ավելացման, դասավանդման նոր մեթոդների կիրառման, դասին ուսանողների ներգրավվածության ապահովման, մեկ դասի շրջանակներում մատուցվող նյութի ծավալի հետ և այլն։

Սրանց վերաբերյալ ամբիոններից նշել են, որ մի շարք խնդիրներ կապված ուսումնական պլանների հետ փորձում են լուծել կրթական ծրագրերի վերանայման ժամանակ, դասավանդման նոր մեթոդների հետ կապված նշում են, որ դասախոսները մասնակցում են վերապատրաստման տարբեր դասընթացների և դասերի ժամանակ կիրառում են նոր ու ժամանակակից մեթոդներ, ինչը ֆիքսել են ամբիոնների վարիչները դասալսումների ժամանակ։

Այստեղ կիրառական արվեստի ֆակուլտետի ուսանողները նշել են իրենց համակարգչային սրահի համակարգիչների հզորության հետ կապված խնդիրներ, ինչի մասին ՏՀՍԶ բաժնի վարիչը նշել է, որ տեղադրված են մասնաճյուղի բարձր պարամետրերով համակարգիչներից, կատարելագործումը շարունակական է, նոր ձեռքբերումների ժամանակ հաշվի են առնվում ֆակուլտետի համակարգչային ծրագրերի պահանջները, առկա է WiFi ինտերնետ կապ, ուսանողները ցանկության դեպքում բերում են անձնական դյուրակիր համակարգիչները։

6. Դասախոսական կազմի բարձրաձայնած խնդիրները և իրականացված գործընթացները

(Հիմք՝ Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդականձնակազմի բավարարվածությունը Մասնաճյուղից -2023թ.)

Այս ուսումնասիրության շրջանակներում վեր են հանվել խնդիրներ, կապված մասնաճյուղի սանիտարահիգիենիկ վիճակի, մասնավորապես լսարաններում ոչ մաքուր վիճակի, ջերմաստիճանային պայմանների, հյուրանոցային համալիրի ընդհանուր վիճակի, աշխատավարձի հետ։

ՏՀՍԶ բաժինը նշել է, որ ս.թ. մարտի 13-ի դրությամբ հյուրանոցում միացվել է UCOM բջջային օպերատորի ինտերնետ կապ՝ օպտիկական մալուխներովով, 15 մբթ/վ արագությամբ՝ արագության մեծացման հնարավորությամբ, ուժեղացված է։

ՏԳԿՍ բաժինը նշել է, որ սանիտարահիգիենիկ վիճակի բարելավման հետ կապված գործընթացները ընթացքի մեջ են, անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներն իրականացվելու են հուլիս-սեպտեմբեր ամիսներին, նախատեսված ապրանքները գնվում են: Իրականացվելու են հետևյալ աշխատանքները. վերանորագվելու է ՏԳՖ-ի աղջիկների սանհագույցը և վարչական մասնաշենքի տղաների սանհանգույցը, 2.արդիականացվելու է ջեռուցման համակարգը, վերևի մասնաշենքում տեղադրվելու են ջեռուցման կաթսաներ և նոր ջեռուցման համակարգ /1-ին մասնաշենքում/, 3.հյուրանոցային համալիրին տրամադրվել է փոշեկուլ, հյուրանոցում բարեկարգվելու է տանիքը և իրականացվելու է սենյակների լամինապատում:

Իսկ Բնական գիտությունների ֆակուլտետի առաջարկը ֆակուլտետում նոր կրթական ծրագրի ներդրման հետ կապված ընթացքի մեջ է և ԿԲԴՎ բաժնի ու՛ադրության կենտրոնում:

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին